«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Մերի Մնացականյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի համար 152 հիմն. դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……3

1. Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ փորձի փոխանակման նպատակով……4
2. Մենթորական աջակցությունը որպես համագործակցության արդյունավետ ձև……8
3. Դասղեկի համագործակցությունը դպրոցի հոգեբանի հետ……9

Եզրակացություն……14

Օգտագործված գրականության ցանկ……15

Ներածություն

Համագործակցության մանկավարժությունը 20-րդ դարի 2-րդ կեսի մանկավարժության ուղղություն է, որը կրթության և վերապատրաստման մեթոդների և տեխնիկայի համակարգ է, որը հիմնված է հումանիզմի սկզբունքների և անհատի զարգացման ստեղծագործական մոտեցման վրա:

Համագործակցությունը մարդկային փոխհարաբերությունների բոլոր բնագավառներում հանգեցնում է գործընթացի արդյունավետ իրականացման: Կրթական համակարգում համագործակցությունն առավել քան կարևոր է, քանի որ արդյունքում շահում է սովորողը: Համագործակցությունը շահեկան է համագործակցող բոլոր օղակների համար, ուսուցիչներն իրենց մասնագիտական գիտելիքները համալրում են, աշակերտները ստանում են որակյալ կրթություն:

Ուսուցչի հաղորդակցական, համագործակցային մշակույթի ձևավորման խնդիրը կարևոր է ոչ միայն մշակութային և մանկավարժական ժառանգության յուրացման իմաստով, այլև որպես մանկավարժական գործունեության մեջ անհատի ինքնիրացման պայման և միջոց, ձգտում մանկավարժական որոնման, նորարարության և անձնական կատարելագործման:

Այս թեման **արդիական** եմ համարել համագործակցության տեսանկյունից, քանի որ <<Անգլերեն>> առարկան թերևս այն առարկաների թվին է դասվում, երբ պետք է համագործակցել առարկայան բոլոր ուսուցիչների հետ:

Աշխատանքի **նպատակն է** ուսումնասիրել՝ ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ, այդ համագործակցության ընթացքում բացահայտել նրանց փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացումը:

Հետազոտական աշխատանքում կանրադառնամ հետևյալ **խնդիրներին**՝

1. ուսումնասիրել ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ փորձի փոխանակման նպատակով;
2. ներկայացնել մենթորական աջակցությունը որպես համագործակցության արդյունավետ ձև:

Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ փորձի փոխանակման նպատակով

Համագործակցությունը ուսուցչի և գործընկերների միջև ինքնանպատակ չէ. այն ուղղված է ինչպես ուսուցիչների ինքնազարգացմանը, այնպես էլ սովորողների մտավոր ու զգայական կարողությունների, ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Մենք մեր աշխատանքում դիտարկելու ենք միայն ներքին համագործակցության ձևերը:

Ներքին գործընկերներ են դիտարկվում համապատասխան դպրոցի ուսուցիչները, մասնավորապես տարրական դասարանների դասվարները, ուսուցչի օգնականները,կերպարվեստի, տեխնոլոգիայի և պարի ուսուցիչները: Տարրական դասարանների դասվարների հետ համատեղ յուրաքանչյուր կիսամյակում պլանավորել որևէ առարկայի մասով թեմատիկ ուսուցման հիմնական տարրերը, նախապես պլանավորել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների օգտագործումը, մշակել աշխատանքային ժամանակացույց պլանավորման մատյանում:

ՀՀ կրթության ժամանակակից համակարգում կարևորվում է ուսուցչի օգնականներնի գործունեության ներդրմանը, որոնք սկսել են ծավալել 2014 թվականից: ՀՀ-ում «ուսուցչի օգնական» հասկացությունը մեկնաբանվում է որպես կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատող[2]:

Ուսուցչի օգնականն աջակցում է ուսուցչին՝

- դասի պլանավորման, ընդհանուր և անհատական նպատակների սահմանման, դասապրոցեսի ընթացքում կիրառվող ուսումնամեթոդական խթանիչ նյութերի նախապատրաստման, ինչպես նաև ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացներում:
- Արտադասարանական միջոցառումների կազմակերպման և իրականացման, խմբի գործունեության վերահսկման և վարքի կառավարման աշխատանքներում:

- Ըստ անհրաժեշտության, դասապրոցեսի ընթացքում և դրանից հետո լրացուցիչ աջակցություն է տրամադրում բոլոր, այդ թվում ԿԱՊԿ ունեցող սովորողներին՝ խթանելով կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման, սովորողների անհատական և սոցիալական ձեռքբերումների զարգացման գործընթացը:
- Ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների հետ համատեղ իրականացնում է դասի արդյունավետության գնահատում, ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրների բացահայտում:
- Համագործակցում է սովորողների ծնողների և խնամակալների հետ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների որակյալ ուսուցման և աջակցության տրամադրման համար պատասխանատու են դասավանդող ուսուցիչները, ուսուցչի օգնականները, մանկավարժահոգեբանական աջակցության թիմը և ծնողները: Ուսուցչի օգնականները, լինելով մանկավարժահոգեբանական աջակցության թիմի լիարժեք անդամներ, պետք է մասնակցեն բոլոր հանդիպումներին և քննարկումներին, հետևողական լինեն յուրաքանչյուր սովորողի մոտ որոշակի հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

Փորձի փոխանակման տեսանկյունից առավել կարևորվում է փոխադարձ դասալսումների իրականացումը ներքին գործընկերների հետ, որը կարելի է իրականացնել ձևավորող և թիրախային մոթոդներով: Անհրաժեշտ է դասալսումներն իրականացնել նախապես կազմված ժամանակացույցին համապատասխան, հետևյալ հաջորդականությամբ՝

- Քննարկում՝ թիրախային խմբի/դասարանի որոշում,
- Բուն դասալսում,
- Դասալսման թերթիկի լրացում,

- Ինքնակատարողականի լրացում:

Կարևորվում է ինքնակատարողականի լրացումը ինչպես դասավանդող ուսուցչի, այնպես էլ դասալսող ուսուցչի տեսանկյունից: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դաձնել դասավանդման մեթոդներին, դասարանի կառավարման խնդիրներին, նաև հատուկ կարիքներ ունեցող սովորողների ներգրավմանը դասապրոցեսին: Ինքնակատարողականը քննարկել համատեղ և վեր հանել խնդիրները:

Աշխատանքում հատուկ ուշադրություն է դարձվել ուսուցչի օգնականի հետ համատեղ դասավանդմանը: Համագործակցությունը ուսուցչի հետ խթանում է ուսուցչի օգնականի մասնագիտական աճը և հաստատում այն տեսակետը, որ ուսուցչի օգնականը կարող է ավելի շատ աջակցել փորձառու ուսուցչին համատեղ դասավանդման ընթացքում, քան դասապրոցեսի ընթացքում և դրանից դուրս ուսումնառության դժվարություններ ունեցող սովորողների հետ չպլանավորված գործողություններ կատարելով: Այն ուսուցչի օգնականներին տրամադրում է ուսուցանելու իրական փորձառություն (համատեղ դասի պլանավորում, ուսուցում, արդյունքների վերլուծություն և գնահատում):

Համատեղ դասավանդումն արդյունավետ ուսումնառությանը նպաստող ուսուցման նոր մոդել է, որը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ամբողջ ժամանակն արդյունավետ օգտագործել և ունենալ բազմազան մեթոդների կիրառման հնարավորություն, ինչպես նաև թույլ է տալիս ուսուցիչներին ապահովել անհատական մոտեցում, նյութի մատչելիություն, իսկ սովորողներին՝ լինել ներգրավված դասապրոցեսում [4]:

Համատեղ դասավանդման առավելությունները սովորողների համար՝

- սովորող-ուսուցիչ քանակական հարաբերակցության նվազում,
- ուսուցման ոճերի և կիրառվող մեթոդների բազմազանություն,
- մասնակցության և ներգրավվածության ցուցանիշների բարձրացում,
- առաջադիմության ապահովում,
- անհատական կարիքների և անհրաժեշտ հարմարեցված միջավայրի ապահովում:

Համատեղ դասավանդումն ուսուցման այն ռազմավարություններից է, որը հիմնված է մասնագետների միջև համագործակցության վրա [3]:

Համատեղ դասավանդման առավելություններն ուսուցիչների և համագործակցող մասնագետների համար՝

- համագործակցության հմտությունների ընդլայնում,
- դիտարկելու և խնդրի լուծումը գտնելու այլընտրանքներ,
- դասավանդման այնպիսի մոտեցումների կիրառում որոնք միայնակ հնարավոր չէ իրականացնել,
- դասաժամի օպտիմալ օգտագործում,
- սովորողների կրթական կարիքների բավարարում,
- աջակցություն դասի պլանավորման և իրականացման բոլոր փուլերում,
- անհրաժեշտ տեխնիկական միջոցների, պարագաների և նյութերի համատեղ նախապատրաստում,
- միջավայրային խոչընոտների թիմային հաղթահարում,
- դասարանի առաջադիմության ապահովում,
- դասարանի կառավարման մոտեցումների կատարելագործում,
- ուսումնական պլանի առավելագույնս իրականացում,
- մետաճանաչողություն՝ ուժեղ և թույլ կողմերի վերհանում:

Համատեղ դասավանդման հիմնական կիրառվող մոդելները հինգն են՝

1. Աջակցող դասավանդում,
2. Ուսուցման կայանների տեղափոխման մոդելով դասավանդում,
3. Զուգահեռ դասավանդում,
4. Այլընտրանքային դասավանդում,
5. Թիմային դասավանդում [5]:

Տարրական դասարաններում առավել կիրառելի է աջակցող դասավանդման մոդելը, երբ ուսուցիչներից մեկը դասավանդում է՝ ստանձնելով դասարանի կառավարման դերը և տալով ընդհանուր առաջադրանքներ, իսկ երկրորդ ուսուցիչն (ուսուցչի օգնականը) օգնում է մյուսին, որպեսզի կարողանան հասնել համատեղ պլանավորած դասի նպատակին: Նախապես մշակված քայլերի միջոցով և

անհատական ուղղորդումներով ուսուցչի օգնականը մոտենում է բոլոր այն սովորողներին, ովքեր ուսուցանվող նյութն ընկալելու, դասարանի կարգուկանոնին հետևելու և ինքնուրույն աշխատելու հետ կապված լրացուցիչ աջակցության կարիք ունեն՝ ապահովելով դասապրոցեսին առավելագույնս ներգրավվելու և հնարավորինս յուրացնելու նախատեսված նյութը: Այս մոդելը հնարավորություն է տալիս անհատական աջակցություն ցուցաբերել նաև ԿԱՊԿ ունեցող սովորողներին [6]: Փորձի փոխանակման տեսանկյունից կարևորվում է նաև դասղեկական մեթոդմիավորումը (դմմ), որը ներդպրոցական համակարգի դաստիարակչական աշխատանքների կառավարման կառույց է, կոորդինացնում է որոշակի տարիքային ընդգրկում ունեցող:

Մենթորական աջակցությունը որպես համագործակցության արդյունավետ ձև

ՀՀ կրթական համակարգում 2019 թվականին <<Դասավանդիր Հայաստան>>հիմնադրամի, ՅՈՒՆԻՍԵՖԻ և ԿԳՄՍ նախարարության կողմից ներդրվեց «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիրը, որի նպատակն է վերապատրաստումների և շարունակական մենթորական աջակցության միջոցով նպաստել ուսուցիչների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացմանը՝ կենտրոնում ունենալով կրթական բազմազան առանձնահատկություններ ունեցող (ազգային, էթնիկ, լեզվական, կրոնական, սոցիալ-տնտեսական, ֆիզիկական, ինտելեկտուալ և այլն) երեխաների կրթության կազմակերպմանն ուղղված կարողությունների զարգացումը: Ծրագիրն իրականացվում է մենթորների կողմից, որոնք, մեկ կիսամյակ գործուղվելով դպրոցներ, վերապատրաստում և մենթորական աջակցություն են տրամադրում այդ դպրոցի մանկավարժներին և ուսուցչի օգնականներին՝ մենթիներին:

Ծրագիրն ուղղված է երկու խումբ խնդիրների լուծմանը՝

1. Թեմատիկ վերապատրաստում՝ ուսուցիչների ակտիվ ներգրավվածությամբ, որի ընթացքում ուսուցիչները զինվում են մասնագիտական գիտելիքներով և կարողություններով:

2. Ուսուցիչների գործնական, մեթոդական, ռազմավարական կարողությունների դիտարկման և զարգացման համագործակցային փուլ, որի ընթացքն ընդգրկում է դասալսումներ, դասի համատեղ պլանավորումներ, հետադարձ կապ կատարված աշխատանքի վերաբերյալ, իրավիճակային քննարկումներ և բազմաբնույթ այլ աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում շահակիցների (մենթորների և մենթիների) խմբի առջև կանոնակարգված չափելի խնդիրներ են դրված, ուստիև ակնկալվող անհրաժեշտ կարողունակությունները հնարավոր է վերահսկել և գնահատել:

Այս ծրագիրը համագործակցության արդյունավետ ձևերից մեկն է, քանի որ մենթորի հետ կարողացել ենք պլանվորել ներառող և մասնակցային դասեր:

Համագործակցության լավագույն ձև էր մեթորի հետ աշխատանքը, վերապատրաստումները, դասալսումները, դասի պլանի քննարկումները, նոր դասի պլանավորումները, համատեղ դասերի իրականացումը: Մենթորի ուղղորդումները բավական արժեքավոր և կարևոր են ոչ միայն սկսնակ, այլև տարիների փորձառություն ունեցող ուսուցիչների համար,քանի որ կրթական գործընթացն ակտիվ օրգանիզմ է.այն անընդհատ զարգանում և առաջ շարժվում: Տարիների փորձառություն ունեցող ուսուցիչներն առավել քան երբևէ ուղղորդման ու համագործակցելու կարիք ունեն՝ կապված ներառական կրթության, նորագույ մեթոդների և տեխնոլոգիաների ներմուծման հետ:

Դասղեկի համագործակցությունը դպրոցի հոգեբանի հետ

Այսօր կրթության մեջ դաստիարակությունը և ուսուցումը հիմնված են երեխայի տարիքային զարգացման հոգեբանական առանձնահատկությունների վրա: Եվ հենց հոգեբանական և մանկավարժական ծառայություններն են, որոնք կան գրեթե բոլոր դպրոցներում, որ օգնության են հասնում դասղեկին իրենց աշխատանքում: Փոխազդեցությունը, փոխըմբռնումը և համագործակցությունը կարելի է անվանել «մասնագետների երկխոսություն»՝ սա հիմք կհանդիսանա դասարանի ուսուցչի և դպրոցի հոգեբանական և մանկավարժական ծառայության փոխգործակցության համար: Առանց այս հիմքի, փոխգործակցության ընթացքում անհնար է հասնել

լիարժեք հաջողության և արդյունքների հասնել աշակերտների ուսուցման ընթացքում առաջացող իրավիճակների և խնդիրների լուծման գործում:

Երեխաներն իրենց ժամանակի մեծ մասն անցկացնում են դպրոցում, և հենց դասղեկն է, ով հնարավորություն ունի «մոտ լինել» երեխային և ժամանակին աջակցություն և հոգեբանական օգնություն ցուցաբերել: Դասղեկը բոլորից ավելի ու ավելի հաճախ է տեսնում երեխային, ավելի լավ է ճանաչում նրան և կարող է օգնել, եթե ոչ կյանքի ընտրությամբ, ապա զարգացման պայմանների օպտիմալացման հարցում: Դասղեկի տրամադրության տակ կան բազմաթիվ գործիքներ հաջող աշխատանքի համար: Բայց դրանց արդյունավետ կիրառումը դրսևորվում է այլ մասնագետների հետ փոխգործակցության մեջ: Դասղեկն իր աշխատանքում դպրոցի հոգեբանի հետ միասին ուսումնասիրում է երեխաների հոգեֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկությունները, կրթությունը, բացասական երևույթների կանխարգելումը, նպաստում է դասարանի թիմում բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը, նաև ապահովում է խորհրդատվական աջակցություն հաղորդակցության, վարքի, հուզական խանգարումների վերացման դասաժամերի, համատեղ գործունեության, դասերի, խաղի մեթոդների միջոցով «աշակերտի հաջողություն = աշակերտ + ծնող + ուսուցիչ» կարգախոսով և վստահաբար կարող ենք ավելացնել + դպրոցի հոգեբանական ծառայությունը:

Որպեսզի սովորողի զարգացումը ուսումնառության գործընթացում համակողմանի տեղի ունենա, հոգեբանական և մանկավարժական ծառայությանը և դասղեկին անհրաժեշտ է հարաբերությունների հստակ կառուցվածք: Եթե համատեղ աշխատանքն ու շահերը համընկնեն, ապա նման համագործակցությունը կբերի ցանկալի արդյունքի ու կլինի արդյունավետ: Ինչպես նաև հակառակը: Ուստի փոխգործակցության սխեմա է պետք, որում դրա արդյունքի համար պատասխանատվության բաշխում կլինի: Նման սերտ և արդյունավետ փոխգործակցությունը և դասղեկի և հոգեբանամանկավարժական ծառայության ինտեգրված համակողմանի մոտեցումը կարող են մեզ դրական արդյունք տալ աշակերտի բազմաթիվ խնդիրների լուծման գործում: Դպրոցում դասղեկը ամենից հաճախ համագործակցում է դպրոցի հոգեբանամանկավարժական ծառայության հետ, հենց նա է կապող օղակը հոգեբանամանկավարժական ծառայության և աշակերտների

միջև: Հոգեբանական ծառայությունը կարող է մեծ օգնություն ցույց տալ դասղեկին դասարանի և ծնողների հետ աշխատելու հարցում:

Դասղեկը և հոգեբանը առաջին հերթին տեղեկատվություն են փոխանակում երեխայի կյանքի վերաբերյալ: Սա հսկայական պլյուս և օգնություն է դպրոցի հոգեբանամանկավարժական ծառայության համար: Ի վերջո, դասարանի ուսուցիչը իր թիմին ճանաչում է ներսից, գիտի երեխաների առանձնահատկությունները: Իհարկե, գաղտնիությունը մնում է հիմնական կանոնը: Ստացված տվյալներով՝ պետք է զգույշ լինել, որպեսզի չվնասեք երեխաներին՝ աշխատելով «մի վնասիր» սկզբունքով: Յուրաքանչյուր դասարանում, որպես կանոն, կա առնվազն մեկ խնդիր, որի լուծումը միանշանակ կգտնվի դասխեկի և հոգեբանի համագործակցության միջոցով:

Նման տանդեմը, ինչպիսին է դասղեկի և հոգեբանամանկավարժական ծառայության փոխազդեցությունը, հասնում է իր նպատակին և տալիս է գերազանց արդյունք: Ժամանակին հայտնաբերված խնդիրը, դրա պատճառները, հոգեբանական օգնության և ուղղիչ աշխատանքների իրականացումը, խնդրահարույց իրավիճակների կանխարգելումը նպաստում են դասարանի թիմի հոգեբանական միկրոկլիմայի բարելավմանը: Կան բազմաթիվ խնդիրներ, որոնք դասղեկը կարող է լուծել հոգեբանի հետ միասին՝

- դաստիարակչական աշխատանքի իրականացում, որն ուղղված է աշակերտների ընդհանուր մշակույթի ձևավորմանը, հասարակության կյանքին հարմարվելու և սոցիալականացմանը, երեխաների հոգեբանական և մանկավարժական բնութագրերի ուսումնասիրությանը;
- մի կողմից առաջացող դժվարությունների և խնդիրների բացահայտում և աջակցություն, իսկ մյուս կողմից՝ նրանց շահերն ու կարողությունները տեսնելը և պաշտպանելը;
- նպաստել երեխաների իրավունքների և ազատությունների իրականացմանը;
- ուսումնական հաստատությունում անվտանգ միջավայրի ստեղծում;
- առողջ ապրելակերպի խթանում, կյանքի և առողջության պահպանության ապահովում;

- երեխաների խնդիրների համատեղ լուծում, երեխայի ընտանիքի հետ գործընկերային հարաբերությունների պահպանում;
- կոնֆլիկտային իրավիճակների ժամանակին լուծում;
- և այլն:

Ես նույնպես լինելով դասղեկ, իմ դասղեկական դասարանում ունեցել եմ դասարանի համախմբվածության, հանդուրժողականության և ընկերասիրության խնդիր, որի լուծումը գտել եմ հոգեբանի հետ համագործակցության արդյունքում:

Դպրոցի հոգեբանի հետ համատեղ իրականացրել եմ սեմինար – քննարկում <<Հանդուրժողականությունը հավասար է ընկերասիրության>> խորագրով, որը ունեցել է դրական արդյունք:

Հանդուրժողականությունը = ընկերասիրության

Եզրակացություն

Ուսումնասիրելով և վերլուծելով թեմային առնչվող մեթոդական գրականություն,եկել ենք այն եզրահանգման,որ ժամանակակից կրթական համակարգը չի կարող պարփակվել միայն տվյալ առարկայի դասավանդման շրջանակներում, այն լճացման կտանի՝ խոչընդոտելով մի ամբողջ սերնդի կրթության և զարգացման գործընթացը: Ստեղծելով համագործակցության նոր արդյունավետ մեխանիզմներ՝ ուսուցիչները համատեղ ջանքերով հնարավորություն ունեն ապահովելու մատչելի, հասանելի և արդյունավետ կրթական գործընթաց յուրաքանչյուր դպրոցում՝ քաղաքային, թե մարզային:

Ամփոփելով հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացությանը: Ուսուցչի համագործակցությունը գործընկերների միջև նպատակ ունի՝

1. Փորձի փոխանակման միջոցով բարձրացնել ուսուցչի աշխատանքի արդյունավետությունը;
2. Հնարավորություն ընձեռնել ուսուցչի ինքազարգացման համար;
3. Դասավանդման և ուսումնառության նոր մեթոդներ կիրառել ուսումնական գործընթացում;
4. Ուսումնական գործընթացում հնարավորինս շատ համագործակցել ուսուցչի օգնականների հետ;
5. Ուսումնական գործընթացում ապահովել համատեղ և համագործակցային մեթոդների հնարավորինս լայն կիրառում:

Գրականության ցանկ

1. Ա Ափոյան Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում: 2014
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք (ՀՕ-200-Ն)
3. Մանուկ Խաչատրյան, Միեր Դավթյան, Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2019)
4. Մեթոդական ուղեցույց Ուսուցչի օգնականների համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն Երևան – 2022 3 Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020
5. Տիքա, Ռ., Էբերի, Բ., Ջոնսթոն, Ք., Պողոսյան, Ա. և Հանթ, Փ. (Խմբ.) (2018) Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք: Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, 249 էջ
6. Shumway, L.K. (2011) Co-teaching handbook, Ed.D. State Superintendent of Public Instruction